

Դրամական փոխանցումն ուղարկողի կամ ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Դրամական միջոցների փոխանցման/ստացման գործարքներ կատարելու համար Հաճախորդին անհրաժեշտ է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Անձը հաստատող փաստաթղթեր են համարվում՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիր կամ նույնականացման քարտ կամ կենսաչափական անձնագիր (վերջինը միայն Բանկի հաճախորդ հանդիսացող ֆիզիկական անձանց համար)

զինվորական գրքույկը՝ այն անձանց դեպքում, ովքեր գտնվում են զինվորական ծառայության մեջ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը /ինքնությունը/ հաստատող փաստաթուղթ,

2. Փախստականների համար՝
փախստականի վկայականը,
փախստականի ճամփորդական փաստաթուղթը,

3. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝
օտարերկրյա պետության անձնագիրը, անձը /ինքնությունը/ հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը,
Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը,
կացության վկայականը: